ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2012 թվականի N 42 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 1161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի դեկտեմբերի 1-ի «Եվրոպական միության Արևելյան գործընկերության շրջանակներում պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագրի ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրերը հաստատելու մասին» N 1161-Ա որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ և 3-րդ կետերով.

«2. Սույն որոշման հավելվածներով նախատեսված մարմինների ղեկավարներին՝ որոշման հավելվածներով սահմանված յուրաքանչյուր միջոցառման կատարման մասին տեղեկատվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն՝ ըստ սահմանված ժամկետների:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ համակարգել որոշման հավելվածների ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման

գործընթացը, ամփոփել միջոցառումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը և յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն։»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. հունվարի 25
Երևան